ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 121 -Ա
«22» ՄԱՐՏԻ 2024Թ

«ՋԱՌԻԹԱՓԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ «ՋԱՌԻԹԱՓԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 8-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 7-ի «Ջառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմավորման ձևով «Ջառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպելու մասին թիվ 318-Ա որոշման 7-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Ջառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Ջառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման կարգը և պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին, ֆինանսական վարչության պետի պարտականությունները կատարողին, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի

պետին, իրավաբանական բաժնի պետին, «Ջառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ յուրաքանչյուրն իր մասով ապահովել աշխատանքների կատարումը՝ ըստ սահմանված ժամկետների:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Վայոց ձորի մարզպետի՝ ոլորտը համակարգող տեղակալ Բ. Սողոմոնյանին:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք.Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2024 թվականի մարտի 22-ի
124-Ա որոշման

«Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը

«Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման կարգը և պայմանները

	Նպատակը	Որոշմամբ սահմանվող ժամկետը	Կատարող պետական մարմինը/կազմակերպությունը/ստորաբաժանումը	Համակատարող ստորաբաժանումը
1.	«Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ը վերակազմավորման ձևով «Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի վերակազմակերպելու մասին ՊՈԱԿ-ի պարտատերերին ծանուցում:	Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5 օր	Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն «Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ	Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչություն

2.	Փոխանցման ակտի նախապատրաստում և ՀՀ Վայոց ձորի մարզպետի հաստատմանը ներկայացում:	Պարտատերերի կողմից պահանջների ներկայացման ժամկետն ավարտվելուց հետո մեկ ամիս	Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն «Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ	Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչություն Մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժին
3.	«Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ կնքված անհատույց օգտագործման պայմանագրերի լուծում:	Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 2 ամիս	Պետական գույքի կառավարման կոմիտեի պայմանագրերի կնքման և պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժին «Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ	
4.	«Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված՝ Հայաստանի Հանրապետություն, Վայոց ձորի մարզ, Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի 3-րդ փողոց, թիվ 33 հասցեում գտնվող անշարժ	Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 2 ամիս	«Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ Պետական գույքի	

	գույքը՝ համաձայն ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 7-ի թիվ 318-Ա որոշման, «Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ից հանձնում-ընդունում:		կառավարման կոմիտեի պետական գույքի տնօրինման վարչություն	
5.	«Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության դադարեցման պետական գրանցում:	Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամիս	Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն «Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ	
6.	«Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի պետական գրանցում:	Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամիս	Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն «Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ	

7.	Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող՝ Վայոց ձորի մարզ, Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի 3-րդ փողոց, թիվ 33 հասցեում գտնվող անշարժ գույքը «Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման իրավունքով հանձնում:	«Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի պետական գրանցումից հետո 10 օր	«Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ Պետական գույքի կառավարման կոմիտեի պետական գույքի տնօրինման վարչություն Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն	
8.	«Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի սեփականություն հանդիսացող շարժական գույքը «Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ին սեփականության իրավունքնով հանձնում	«Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն»ՓԲԸ-ի պետական գրանցումից հետո 10 օր	Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն «Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ	

9.	«Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի (ժամանակավոր պաշտոնակատարի) նշանակում:	«Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի պետական գրանցումից հետո 3 օրյա ժամկետում	Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժին:	
10.	«Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի կանոնադրության մշակում և ՀՀ Վայոց ձորի մարզպետի հաստատմանը ներկայացում:	Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10 օր	Մարզպետի աշխատակազմի Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն «Զառիթափի ի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ	Մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժին